

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ
JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 22

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)

Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր

Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ

Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր

Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր

Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ

Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ

Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր

Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.

Տեր-Սաթևոսյան Վահրամ պ.գ.դ.

Գրեկյան Երվանդ պ.գ.դ.

Րեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)

Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)

Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)

Իլյա Յակուբովիչ բ.գ.դ., պրոֆեսոր (Գերմանիա)

Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Արաբ Փաշայան

ՍԱՌԻԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՆ ԵՎ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ». ԵՐԿԱԿԻ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....7-21

Գոռ Գևորգյան

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ (1981-2014 ԹԹ.).....22-34

Վահե Հակոբյան, Տաթևիկ Մկրտչյան, Հայկ Քոչարյան

ԹՎԻԹԵՐԻ ԱՐԱԲԱԼԵԶՈՒԻ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ 2020Թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱԶՈՐԴԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ (2020-2021ԹԹ.).....35-49

Տաթևիկ Մկրտչյան

ԻՄԱՍ ԱԼԻԻ ՆԱՄԱԿԸ ՄԱԼԻՔ ԱԼ-ԱՇԹԱՐԻՆ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՎԱԽՈՒԹՅԱՆ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ՄԻ ՆՍՈՒՇ.....50-61

Աննա Անտոնյան

ՏԱԲԱԿԱԹ ԺԱՆՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ 9-ՐԴ ԴԱՐԻ ԱՐԱԲԱՍՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ.....62-75

Սյարսուսյ Բաղդասարյան

2005 Թ.-Ի ԻՐԱԶՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐԸ.....76-94

Թյուրքագիտություն

Լուսինե Խաչատրյան, Անուշիկ Մարտիրոսյան, Ալեքսանդր Մաֆարյան

ԹՈՒՐԻՔԵՐԵՆԻ ÜZERE ԵՎ DİYE ՀԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐԸ.....95-109

Մամլեղ Ռանագրան

ՆՈՐԱՀԱՅՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐ «ՔՅՈՈՕՂԼԻ»

ԷՊՈՍԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԱՐՔԵՐԱԿՆԵՐՈՒՄ.....110-116

Թանարա Աղանայրան

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ

ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ

ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ 1965-1969 ԹԹ.....117-131

Այբինա Մուրադյան

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ

ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ՈՒ

ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ

ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ.....132-152

Իրանագիտություն

Արփինե Առուշանյան

ՀՈԳՈՒ ՎԵՐԱՄԱՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

ԾԱՅՐԱՀԵՂ ԾԻԱՅԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐՈՒՄ.....153-167

Լիանա Պետրոսյան

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԽՈՍՔԻ ԱԶՏՈՒԹՅՈՒՆԸ ԻԻՀ-

ՈՒՄ Մ. ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԾՐՋԱՆՈՒՄ

(2005-2013թ.թ.).....168-182

*Ժաննա Վարդանյան **

ԻՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐՐՈՐԴ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ՀԵՏՈ.....183-195

Աշխեն Հովսեփյան

ՀԱՅ-ՀՆԴԿԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ.....196-204

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Արտյոմ Տոնոյան

ՀՈՎԻՏԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ, ԱՔԵՆԵՆՅԱՆ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻ ՎԱՐՅԱԿԱՆ

ՔԱԺԱՆՈՒՄԸ, «Էդրոսադո» հրատ.,

Հայաստանի Հանրապետություն, Գյումրի, 2021, 456 էջ:.....205-211

CONTENT

Arabic Studies

Araks Pashayan

SAUDI ARABIA AND THE «ARAB SPRING». THE POLICY OF
DOUBLE STANDARDS.....7-21

Gor Gevorgyan

TRANSFORMATION OF EGYPT`S ARAB POLICY:
OPPORTUNITIES AND CHALLENGES (1981-2014) 22-34

Vahe Hakobyan, Tatevik Mkrtchyan, Hayk Kocharyan

DISCUSSION OF THE MAIN DISCOURSES OF THE 2020 44-DAY
ARTSAKH WAR AND THE SUBSEQUENT PERIOD IN
THE ARABIC-LANGUAGE TWITTER (2020-2021).....35-49

Tatev Mkrtchyan

IMAM ALI'S LETTER TO MALIK AL-ASHTAR AS A MODEL OF
JUST GOVERNANCE/RULERSHIP, RELIGIOUS
RIGHTEOUSNESS AND PIETY.....50-61

Anna Antonyan

THE FORMATION OF THE ṬABAQĀT GENRE IN THE
9TH CENTURY ARAB-MUSLIM WRITTEN CULTURE 62-75

Spartak Baghdasaryan

THE 2005 IRAQI CONSTITUTION AND THE FORMATION
OF A NEW SYSTEM OF GOVERNMENT.....76-94

Turkic Studies

Lusine Khachatryan, Anushik Martirosyan, Alexander Safaryan

ON THE PECULIARITIES OF TEACHING TERMS FORMED
WITH PREPOSITIONS ÜZERE AND DİYE OF THE TURKISH
LANGUAGE AND THEIR COLLOCATIONS
IN THE ARMENIAN LANGUAGE.....95-109

Samvel Ramazyan
NEWLY DISCOVERED ARMENIAN PERSONAGES IN
THE TURKISH VERSIONS OF THE EPIC “KOROGLU” 110-116

Tamara Aghamalyan
IDEOLOGICAL BASIS OF THE REPUBLICAN PEASANTS’
NATION PARTY 1965-1969 117-131

Albina Muradyan
PUBLIC PERCEPTIONS AND MANIFESTATIONS OF RELIGIOUS
AND TRADITIONAL BELIEFS DURING
THE CORONAVIRUS PANDEMIC IN TURKEY 132-152

Iranian Studies

Arpine Arushanyan
THE IDEA OF THE TRANSMIGRATION OF SOULS
IN EXTREME SHIA SECTS 153-167

Liana Petrosyan
HUMAN RIGHTS AND FREEDOM OF SPEECH IN IRI DURING
M. AHMADINEJAD'S PRESIDENCY (2005-2013) 168-182

Zhanna Vardanyan
IRAN'S POSITION DURING AND AFTER
THE THIRD ARTSAKH WAR 183-195

Ashkhen Hovsepyan
ARMENIAN-INDIAN RELATIONS. HISTORICAL
OVERVIEW 196-204

BOOK REVIEW

Artyom Tonoyan
Hovhannes Khorikyan, The Administrative Divisions of Achaemenid
Iran, “Eldorado” publisher, RA, Gyumri, 2021, 456 p: 205-211

**ՆՈՐԱՀԱՅՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐ «ՔՅՈՌՕՂԼԻ»
ԷՊՈՍԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՈՒՄ**

Բանալի բաներ՝ «Քյոռօղլի» էպոս, թուրքական տարբերակներ, Հայոց թագավոր, Հայոց գորավար, Կիլիկիա, Օլթի

«Քյոռօղլի» էպոսի գրառման ժամանակահատվածից սկսած հայ և օտարազգի ուսումնասիրողների կողմից բազմիցս մատնանշվել է ակնհայտ դրսևորված հայկական ազդեցությունը, ինչն արտահայտվում է, մասնավորապես, պատմական ենթաշերտն առավելապես պահպանած արևմտյան խմբի տարբերակներում հայկական վիպական ավանդույթի տարրերի, հայկական կերպարների և դրվագների առկայությամբ: Վերոհիշյալը պայմանավորված է մի քանի հանգամանքներով, այն է.

• *էպոսի պատմական հիմք հանդիսացած ջալալիական ապստամբությունների՝ հայկական և հայարնակ տարածքներում ծավալված լինելը,*

• *Հայոց վիպական ավանդույթի կենսունակությունն անգամ տարածաշրջանի ժողովրդագրական դիմագծի փոփոխություններից հետո,*

• *Թուրքալեզու հայ աշուղների մասնակցությունն էպոսի կազմավորմանն ու ձևավորմանը:*

Նման պայմաններում տրամաբանական է նաև հայկական կերպարների առկայությունն էպոսի տարբերակներում, ինչն առավել բնորոշ է պատմավավերական ատաղձը պահպանած արևմտյան խմբի տարբերակներին և, հատկապես, թուրքական կամ արդի Թուրքիայի տարածքում գրառված և մինչ այժմ հրատարակվող պատումներին: Կենտրոնական Ասիայում տարածված արևելյան խմբի տարբերակներում հայկական կերպարներն արդեն ստանում են ընդհանուր քրիստոնեական

¹ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնի ավագ դասախոս, է. փոստ՝ sramaz@mail.com

կամ կովկասյան գունավորում, ինչն առավել դրսևորվում է էպոսի պատմական միջուկը և տարրերը պահպանած թուրքմենական «Գյոռողլու» ամենատարբեր պատումներում:

Առավել հանրահայտ է հայ վաճառականի (Բեզիրգեն) և Քյոռողլու որդեգիր Այվազի (Էյվազ, Ավազ) կերպարների առկայությունն էպոսի գույգ խմբերի տարբերակներում, ինչը հստակ կապակցվում է խնդրո առարկա ժամանակահատվածում հայ վաճառականության խաղացած եզակի միջազգային դերակատարությանը² և ջալալիական ապստամբությունների ընթացքում իրականացված վայրագ մանկահավաքներին («ղևջիրմե»)³: Էպոսի հայտնի հետազոտող Փերթև Նախլի Բորաթավը ժամանակին նշել է, որ թուրքական տարբեր պատումներում հայ են ներկայացվում Քյոռողլու որդեգիր Այվազը և Քեչել Համգան (Քիչել Հեմգե), որը երբեմն որպես «*էրմենի Համգա*» է հիշատակվում⁴: Վաճառականի կերպարից բացի, Բորաթավը, հատկապես, Մարաշում գրառված պատումներում ընդգծում է հայկական կերպարների և հատուկ անունների հետ կապված առատությունը: Մի առիթով նշվում է նույնիսկ, թե Կայսերիի (Կեսարիա) նահանգապետից խույս տալով՝ Քյոռողլու մոտ են ապաստանում 17 վանականներ⁵:

Առավել առանձնահատուկ է նորագույն ժամանակահատվածում Ադանայի շրջանում գրառված էպոսի նորահայտ տարբերակը, որում առկա է որևէ այլ տեղ չհանդիպող մի ամբողջական գլուխ՝ «*Քյոռողլու Հայաստանի արշավանքը*» («*Köroğlu'nun Ermenistan Seferi*»): Ընդամին, դրանում նկարագրվում է Քյոռողլու պատերազմը հայերի դեմ, Հայոց թագավորի (*Ermeni Kralı*) գերեվարումը ևն, ինչը պետք է որ տեղական պատմական իրողությունների արգասիք լինի⁶: Նորահայտ պատումը 1990-

² Ռամազյան Ս., Վաճառականի կերպարը «Քյոռողլի» էպոսում և դրա պատմականության հիմքերը, ԼՀԳ, թիվ 2 (653), Ե., 2018, էջ 205-219:

³ Ռամազյան Ս., Որդեգրի կերպարը «Քյոռողլի» էպոսում և դրա պատմականության հիմքերը, Արևելագիտության հարցեր, թիվ 13, Ե., 2017, էջ 272-311:

⁴ Boratav P.N., Köroğlu Destanı. Ankara, 2016, ss. 45, 54, 71.

⁵ Նույն տեղում, էջ 126:

⁶ Kaya D., Köroğlu Kollarının Yeni Varyantları. Türklük Bilimi Araştırmaları, S. 5, ss. 311-334, Sivas, 1997.

ական թթ. գրառել է Գյուզիդե Հեքիմօղլուն, Ադանայի Օսմանիյե գավառի Քադիրլի գավառակի Բեքերեջի գյուղում⁷, տեղաբնակ Յուսուֆ Սըրայից (ծն. 1943թ.): Այն որևէ այլ տարբերակով հայտնի չէ և իր բովանդակությամբ աննախադեպ է: Ստորև ներկայացվում է խնդրո առարկա տարբերակի 6 մասերից մեկը հանդիսացող «Քրոնոլոլու Հայաստանի արշավանքը» գլխի բովանդակությունը, հետևյալ հիմնական գծերով.

• *Քրոնոլոլին Չամլըբեից իր 14 հոգանոց խմբով օգնության է հասնում 6 տարի հայերի դեմ կռված և ուժասպառ եղած Եմենի Դեմիր փաշային՝ իր ուստանում հանդիպելով և պայմանավորվելով վերջինիս աջակից Ստամբուլցի Հուսեյնի հետ,*

• *Իր և մարտիկների ճարպկության շնորհիվ հաջորդ օրն իսկ 6 ժամվա ընթացքում Քրոնոլոլին կարողանում է գերել Հայոց թագավորին,*

• *Դեմիր փաշայի և գերյալ թագավորի հետ Քրոնոլոլին դիմում է երկար ճանապարհորդության, անցնում Շամ, Բեյրութ, Հալեպ, Ադանա, Անկարա, այնուհետև՝ Բոլուի լեռներ, Չամլըբեյ,*

• *Ճանապարհին Քրոնոլոլուն պատժում է Հայոց թագավորին՝ մեջքին թամբ և գլխին կախոց դնելով,*

• *Ի վերջո, հասնում են Ստամբուլ և փառիշահին հանձնում Հայոց թագավորին, որը զնդան է նետվում,*

• *Որպես վարձատրություն, փառիշահը հրամանագրով ճանաչում է Քրոնոլոլու իրավունքը Չամլըբեյի նկատմամբ և գործողությունների ազատություն շնորհում⁸:*

Վստահաբար տվյալ պատումը տեղական միջավայրի և ժամանակին արձանագրված պատմական իրողությունների արդյունք է: Առավել հավանական է թվում, որ այս կերպ իր գեղարվեստական ամփոփումն է գտել տեղաբնակների վերհուշը Կիլիկիայի հայոց թագավորության մասին: Հայոց թագավորի գերեվարման դրվագի պատմական նախահիմքն իրավամբ կարող է համարվել 1375 թ. Կիլիկիայի հայոց թագավորության անկման և

⁷ Մինչև 1925 թ. գյուղն առավել հայտնի է եղել Մաքարաջըլար անվամբ:

⁸ Kaya D., նշվ. աշխ., էջ 311-334:

Լևոն Զ Լուսինյանի (1342-1393 թթ.) գերեվարման պատմությունը, ինչով սույն պատումն առավել արժևորվում է:

Արդի թուրք բանասիրության համար սույն պատումն անբացատրելի է, քանի որ թուրքական պատումներում հակառակ-հանվանե հանդիպում են հայկական կերպարներ, որոնց ևս բացասական գծեր են վերագրվում, սակայն տվյալ դեպքում խոսքը Հայաստանի և Հայոց թագավորի դեմ պայքարի մասին է, ինչն, ընդհանրապես, շփոթի է մատնում՝ տեղիք տալով անհասկանալի հակահայ և հակագիտական մեկնաբանությունների: Քյոռոզլուն վերագրվում է, իբր, մահմեդական թուրքերի նկատմամբ հայերի իրագործած «գուլումներից» վրեժխնդիր անձնավորության դեր ևն⁹:

Միևսույն շարքին կարելի է դասել Օլթիի շրջանում Մեթե Թաշլուովայի կողմից գրառված և 2016 թ. հրատարակված էպոսի նորահայտ պատումը, որը պայմանականորեն հիշատակվում է որպես «Օլթուի ճյուղ» (Oltu Kolu) և ունի հետևյալ հիմնական բովանդակային գծերը.

- *Մի առիթով Օլթի քաղաքում հայերի կողմից ձերբակալվում են Քյոռոզլու գործակիցները և գնդան նետվում,*

- *Իսաբալիի (Դեմիրչիօղլու) օգնությամբ Քյոռոզլին, որպես դերվիշ ծպտված, կարողանում է մուտք գործել Օլթի՝ ձերբակալվածներին ազատելու նպատակով, իսկ մնացած խմբին պատվիրում է սպասել քաղաքից դուրս, հետագա հարձակման համար,*

- *Ձնդանի կողքով անցնելիս Քյոռոզլին լսում է իր ձերբակալված որդի Հասանի երգը,*

- *Հայ գորավարը (Ermeni Paşa), այն է՝ Օլթիի կառավարիչը, հրամայում է հերթով կախադան հանել Քյոռոզլու մարդկանց,*

- *Սկզբից բերում են Քյոսե Քենանին, և Քյոռոզլին դիմում է խորամանկության՝ ասելով, թե դրանք իրեն շատ են ճնշել և ցանկանում է անձամբ դատաստան տեսնել, ինչին Հայ գորավարը հավանություն է տալիս,*

⁹ Şimşek E., Çukurova Yöresi Sözlü Halk Kültüründe Köroğlu Hikayeleri ve Yusuf Sıra Anlatması. Uluslararası Köroğlu, Bolu Tarihi ve Kültürü Sempozyumu Bildirileri (17-18 Ekim 2009), Bolu, 2011, ss. 636-651.

• *Քյոռոզլին կարողանում է կտրել Քոսե Քենանի ձեռքի պարանները, ազատել նրան և իր մյուս մարդկանց*¹⁰:

Վերոհիշյալ պատումը ևս եզակի է իր տեսակի մեջ, թուրք սասցոդը, փաստորեն, առնվազն ընդունում է, որ Օլթին հայկական է եղել, իսկ Քյոռոզլին և իր խումբն՝ օտարամուտ, որը ձերբակալել է տեղի օրինական կառավարիչ Հայ գորավարը:

Ինչպես Հայոց թագավորին, այնպես էլ Հայ գորավարին կրկին վերագրվում են ամենաբացասական գծերը, ճիշտ նույն կերպ, ինչպես հայկական ծագմամբ բոլոր կերպարներին: Բոլոր դեպքերում էլ հայկական կերպարներին հակադրվում են սեփական վիպական հերոսները, թեև ակնհայտ է, որ իշխանավորների, իմա՝ պետականության առկայության պայմաններում, նրանք բավական խոցելի են դառնում՝ հանդես գալով որպես ուղղակի ավազակապետեր և դրսեկ քոչվոր առաջնորդներ: Ակնհայտ է, որ վերոհիշյալը չի համապատասխանում պետական մակարդակով Թուրքիայում ընդունված ավտոխտոն ծագման հայեցակարգերին: Ըստ այդմ, նորահայտ գրույցները ենթարկվում են ոչ թե գիտաքննական վերլուծության, այլ օգտագործվում պետական մակարդակի բարձրացված հայատյացության քարոզարշավում:

Անկասկած, տվյալ շարքը չի սպառվում վերը ներկայացված նորահայտ պատումներով, այլ վստահաբար առկա են այլ նյութեր ևս, որոնք թուրք իրականության մեջ ընդունված և տակավին գործող արգելքների պայմաններում, ընդհանրապես, չեն հրատարակվել (թեև գրառվել են) կամ ուղղակի դեռևս բավարար չափով հասանելի չեն եղել ներկա ուսումնասիրության պատրաստության ընթացքում: Այլ հարց է նաև, թե որքանով են ամբողջությամբ հրապարակվել առկա նյութերը և ընթացքում ինչ միջամտություններ են թույլ տրվել հրատարակիչների կողմից:

Իր հերթին Հայոց թագավորի կերպարը նորություն չէ թուրքական և, ընդհանրապես, թուրքական վիպական

¹⁰ Taşlıova M., Köroğlu Oltu Kolu (İnceleme-Metinler), Akçağ Yayınları, Ankara 2016, ss. 408-409. Տե՛ս նաև Alptekin M., Köroğlu Destanı'nın Anadolu Kollarında Tutsak Olma ve Tutsaklıktan Kurtulma Motifi – DUSBED (Dicle Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Dergisi), Yıl 10, Sayı 20, ss. 206-223, Nisan 2018, s. 218.

ավանդության համար: Մասնավորապես, Կարսի շրջանում տարածված Անիի կործանման մասին զրույցներում (*«Առասպել Անիի կործանման մասին»*) մահմեդականների հակառակորդն Անիի տիրակալ Հայոց թագավորն է՝ Թավամազ Օհանը (Kılılı Ohan) կամ Օհանները¹¹: Սակայն սա արդեն այլ ընդհանուր թեմա է և այլ ուսումնասիրության նյութ:

НОВАЯВЛЕННЫЕ АРМЯНСКИЕ ПЕРСОНАЖИ В ТУРЕЦКИХ ВЕРСИЯХ ЭПОСА "КЁРОГЛЫ"

Самвел Рамазян
(Резюме)

Наличие армянских персонажей в эпосе “Кёроглы” (“Кёроглу”) более характерно для версий западной группы, сохранивших историческую канву и, особенно, для версий, записанных на территории современной Турции. С этой точки зрения представляют интерес относительно недавно зафиксированные и опубликованные версии в районах Аданы и Олти, в которых среди противников Кёроглу фигурируют Армянский царь (Ermeni Kralı) и Армянский полководец (Ermeni Paşa). И армянскому царю, и армянскому военачальнику приписываются самые отрицательные черты, точно такие же, как и всем персонажам армянского происхождения. Во всех случаях армянским персонажам противопоставляются собственные эпические герои, хотя очевидно, что при наличии правителей, т. е. государственности, они становятся достаточно уязвимыми, выступая в роли предводителей разбойников и иноземных кочевников.

NEWLY DISCOVERED ARMENIAN PERSONAGES IN THE TURKISH VERSIONS OF THE EPIC “KOROGLU”

Samvel Ramazyan
(Summary)

The presence of Armenian personages in the epic “Koroglu” is more characteristic of the versions of the Western group that have preserved the historical authenticity and, especially, of the versions recorded on the

¹¹ Belli O., Ani Şehri'nin Yıkılış Efsanesi (Kılılı Ohan Efsanesi), Uluslararası Ani-Kars Sempozyumu 14-16 Ağustos 2014, Kafkas Üniversitesi, ss. 297-299, İlk Basım 2016, İstanbul.

territory of modern Turkey. From this point of view, relatively recently recorded and published versions in the regions of Adana and Olti (Oltu) are of interest, in which the Armenian King (Ermeni Kralı) and the Armenian General/Commander (Ermeni Paşa) appear among the enemies of Koroglu. Both the Armenian King and the Armenian General are again assigned the most negative traits, exactly the same as all personages of Armenian origin. In all cases, the Armenian personages are opposed by their own epic heroes, although it is obvious that in the presence of the rulers, i.e. statehood, they become quite vulnerable, acting as bandit leaders and foreign nomadic leaders.